*Ծանոթ. Փորագրված է գլխագիր և մանր տառերով անվարժ ձեռքի արդյունք է*[96]*: Հրատարակիչը թվագրում է XVI-XVII դարերով:*

*394. Նույն նորարաց տաճարում, մարմարե ըեկորի վրա եղած հունարեն արձանագրության սւոորե.*

/Ք/աշք ի...ոյս Ա̅յ...[97]

## ՉՈՒՐԳՈՒՆ ԳՅՈՒՂ (Սևաստոպոլի մոտ)

*Տապանաքար քանդակազարդ, Քրիստոսի խաչելության պատկերով, վրան 4 տողանոց արձանագրություն. գտնվել է շինարարական աշխատանքների ժամանակ: Տավրիկյան արխիվային հանձնաժողովը, Դ. Դ. Լաշկովի միջոցով տապանաքարը հանձնել է Սիմֆերոպոլի թանգարանին: Հիշյալ հտնձնաժողովի նախագահ Ա. Ի. Մարկովիչը արձանագրությունների լուսանկարն ուղարկել է Քուչուկ- Հովհաննիսյանին, որի վերծանությունները խիստ կասկածելի են: Սիմֆերոպոլում եղած ժամանակ թանգարանի աշխատակիցների հետ միասին քարեգարանում փնտրեցինք այս քարը, սակայն չգտանք:*

*Բնագիրը տալիս ենք Քուչուկ-Հովհաննիսյանի վերծանությամբ, որի ճշտությունը չենք երաշխավորում:*

*395.*

ա/ Այս է հանգստեան տապանաց անգի Հիմանան
⌈Ներսէ⌉սի ⌈գու⌉սար Այպեքէի, որդի Քամոեսնայի
... Է՜ո՜ս. որք մի ամիս օ՜ր՜նչ որ կան.
...Ի տապապի. մի օր ոչ եղև մեզ ավելի
...Հարս Նազելի, որդի ծնել...ժամտնի
.../ցաւոքն մորմոքէի. արու որդիս այս ծնանի
⌈Առա⌉ել, զի գԳեորգայ եւո ծնունդն աւուրց
...ննջողի գսմատն է հող տապանի:

ը/ Յիշատակ է Յով⌈աննէ⌉սի
Ջարմիցս Խելքնազի.
Բայց ես գերիս... ասա ոչ էի.
Կոստանդինոսի համրաւն առի
Եւ Ղուկասի, որ նոր լսեցի՝
Ջկողակիցն իմ ի տապանի
Հեր գալիս սա ափէս անսի
Նմանենաս խելագարի:
Նա կարի ⌈Սար⌉գսի

96 Там же, ,с. 40-41.
97 Там же.

նա եղեցի...Հեղի
Թէպէտ բազումք կան այսպիսի,
Բայց Կոգերցլեցի...
Հրամանն այս է Ամաչի
Դուլիկ Ղոեսախս տղայի
Որն որ ասէր Հայս ու փեսա
Բաժնի էին Դունեկղի
Ոչ է նման Ալտակնի.
Ոչ Հայր նման...
Եւ ոչ սիրե[լիք]... Եղբ[արք], ոչ բար[եկամք] սորա:

*Ծանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանը թվագրում է XVII-XVIII դարերով:*

Հրատ. *Куч.-Иоаннесов, ""Изаестия Таврической архивной комиссии,"" N44, առանձնատիպ, էջ 2-4:*

## ՅԱԼԹԱ

*Յալթա քաղաքի առավել աչքի ընկնող պատմաճարտարապետական հուշարձաններից է հայկական եկեղեցին , որը գանվում է Լեսնայա և Զագորոդնայա փողոցների համաման անկյունում՝ բարձր ըլրի հարթության վրա: Տաճարը շրջակայքի նկատամամբ ունի աիրապետող դիրք: Նրան հասնելու համար պետք է բարձրանալ ավելի քան 100 աստիճան ունեցող լայն սանդուղքով, որի աջ և ձախ կողմերին ծփում են երկնասույզ նոճինները: Հռիփսիմեատիպ այս եկեղեցին կառուցվել է 1905-1917 թթ. ընթացքում, բաքվեցի մեծահարուստ նավթարդյունաբերող Պ. Ղուկասյանի (Տեր-Ղուկասով) ծախսով: Շինանյութը գորշավուն ավազաքարն է: Տաճարը նվիրած է նպաստավորողի վաղամեռիկ դստեր՝ Հռիփսիմեի հիշատակին: Ճարտարապետը Տեր-Միքելյանն է: Իկոնոստասի քանդակազարդումները կատարել են Դ. Մերկուրովը և Տարագրոսը (Տեր-Վարդանյան): Գմբեթի առաստաղը նկարազարդել է Վարդգես Սուրենյանցը, որի շիրիմը գանվում է եկեղեցու մուտքի ձախ կողմում, փոքր-ինչ ներքև:*

*Յալթայի տաճարը փասաորեն գամբարան- եկեղեցի է, քառանկյուն հատակագծով. բազմանիստ թմբուկին հենված է ըրգաձև ծածկով ավարտուն գմբեթը: 1970 թ. այն վերածված էր հնագիտական թանգարանի:*

*Ղուկասյան գերդաստանի գամբարանատունը գանվում է տաճարի առաջին հարկում, լավ հղկված սպիտակ մարմարե պատեր ունեցող սրահում: Ցինկապատ վեց դագաղներից երեքը բացված են, իսկ մյուս երեքը, մեզ ուղեկցող աշխատակցի պատմելով՝ աեղում են: Դամբարանների որմնախորշերի վրա ագուցված մարմարե սալաքարերին ոսկեզօծ տառերով գրված է.*

*Ձախից աջ՝*

*396.* Առաջինին. *6 տող.*

ՀՌԻՓՍԻՄԷ /ՊՕՂՈՍԵԱՆ/ ՂՈՒԿԱՍԵԱՆՑ. ԾՆ. 14 ԴԵԿՏ. 1883/ ՎԱԽՃ. 5 ՅՈՒՆԻՍԻ/ 1901:

*397.* Երկրորդին՝ *4տող.*

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՊՕՂՈՍԵԱՆ/ ՂՈՒԿԱՍԵԱՆՑ./ ծն. 28 ՕԳՈՍՏ. 1885/